

Չարգելի հյուրեր, գործընկերներ, գիտաժողովի մասնակիցներ



Ողջունում եմ բոլորիդ **«21-րդ դարի մարտահրավերները և մարդկային զարգացման ասպեկտները»** խորագրով գիտաժողովի առթիվ, որն անցկացվու է ԱՎ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի 20-ամյակի կապակցությամբ: Իր ուղղվածությամբ այս գիտաժողովը կարևոր է, քանի որ գլոբալ խնդիրներն ունեն մոլորակային բնույթ և հուզում են աշխարհի բոլոր ազգերին, հետևաբար անհետաձգելի և արդյունավետ լուծման կարիք ունեն, պահանջվում են բոլոր պետությունների միացյալ ուժերը, մոլորակի ողջ մարդկության համախմբվածությունը:

Մեր բուհը այս գիտաժողովի շրջանակներում իր առջև խնդիր է դրել համախմբելու տարբեր երկրների գիտականներուժը, բազմաբնույթ գլոբալ հարցերի քննարկման և լուծման ուղիների որոնման գործում:

Անկասկած, գիտաժողովում հնչող զեկուցումները, քննարկումները, առաջարկությունները կնպաստեն գլոբալ խնդիրների հաղթահարման ճանապարհների մշակմանը:

Բոլորին մաղթում եմ բեղմնավոր և արդյունավետ աշխատանք:

Լաուրա Մկրտչյան

Ավետիք Մկրտչյանի անվան

Տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր

Խմբագրական խորհրդի նախագահ՝

Լաուրա Մկրտչյան – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր, Եվրոպական ռեկտորների Ակումբի անդամ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Գլխավոր խմբագիր՝

Ղարիբյան Գրիշա – ԵՊՀ տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ:

Պատասխանատու քարտուղար՝

Ալբերտ Ոսկանյան – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր:

Խմբագրական կոլեգիա՝

1. **Ալբերտ Սարգսյան** – ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի տնօրեն, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
2. **Ջրանտ Աբրահամյան** - Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր:
3. **Մահմուդ Ա. Խան** – ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Փամփլինգ բիզնես քոլեջի պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր:

4. **Լյուդվիգ Մելքումյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր:
5. **Աշոտ Խոյեցյան** – Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահ:
6. **Նաիրա Չակոբյան** – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության և ստանդարտացման վարչության պետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
7. **Անդրեյ Ազեև** – Համաշխարհային տնտեսագիտության և ինֆորմատիզացիայի ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
8. **Յուրի Մարտին** – Էստոնիայի Հանրապետության գիտական ակադեմիայի ակադեմիկոս, Եվրաակադեմիայի ռեկտոր, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
9. **Այգուլ Մադիրովա** – Ղազախստանի Հանրապետության Նախագահին կից Պետական կառավարման ակադեմիայի պետական և տեղական կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր (Ղազախստան):
10. **Սուկրատ Խանյան** – Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
11. **Նարինե Սոլոմոնյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու:
12. **Սուսաննա Կազդանյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:
13. **Ջրիստինե Դադյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի լեզուների և մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:
14. **Արուսյակ Մուխասիաչոյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու:
15. **Վաչագան Ավագյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու:
16. **Կարինե Դանիելյան** – «Հանուն մարդկային կայուն զարգացման» ՀԿ-ի նախագահ, աշխարհագրական գիտությունների դոկտոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԼԱՌԻԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԼԲԵՐՏ ՈՍԿԱՆՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՆՑՅԱԼԸ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Հոդվածում ներկայացված են Հայաստանի կրթական զարգացման պատմական առանձնահատկություններն ու յուրահատուկ ելևէջները:

Հինգերորդ դարի սկզբներից ի վեր, ունենալով իր գիրն ու գրականությունը, ազգային դպրոցները, համալսարանական տիպի հաստատությունները: Հայաստանը կրել է ժամանակակից առաջավոր երկրների ազդեցությունը և ազդել է նրանց կրթական համակարգերի վրա:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությանը և նրա կազմում Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանը որդեգրել են միջազգային կրթական համակարգին ինտեգրման ուղին: Ներհամալսարանական ընդհանուր բարեփոխումները, կրեդիտային համակարգի ներդրումը, մոդուլային ուսուցմանն ուղղված քայլերը, կրթության որակի ապահովման Բոլոնիայի հռչակագրի պահանջների ապահովմանն ուղղված գործառնությունները համահունչ են միջազգային կրթության պահանջներին և երաշխիք են զարգացած ազգային կրթություն և տարբեր երկրների հետ լայն համագործակցություն իրականացնելու համար:

* * *

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կրթության որակի գնահատման առաջատար փորձագետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդվածում հեղինակը ներկայացնում է մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության համակարգը, կրթության որակի ապահովման ժամանակակից մոտեցումները և իր կողմից մշակված մասնագիտական կրթության որակի համալիր վերահսկողության սխեման:

Հեղինակը գտնում է, որ նշված պայմանների ապահովման դեպքում հնարավոր է պատրաստել բարձր որակավորում և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ:

* * *

ԼԱՌԻՎ ՄԿՐՏՉՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՆՉԱԴՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հոդվածը նվիրված է այսօրվա արդիական խնդիրներից մեկին՝ ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաներին բարձրագույն կրթական համակարգում: Դիտարկվում են ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաները, բացահայտվում են դրանց տեսակները, հատկապես մոդուլային ուսուցումը: Լուսաբանվում են թեստավորման առավելությունները և թերությունները:

Հենվելով ուսումնասիրությունների արդյունքների վրա, ի հայտ են գալիս ուսանողների կողմից առավել ընդունված ուսուցման տեխնոլոգիաները:

* * *

**ՄԱՐԴԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ**

ԼՅՈՒԴԿԻԳ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական Համալսարանի դասախոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**ՄԱՐԴՈՒ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ
ՍՊԱՍՎԵԼԻՔ ԱՂԵՏԸ**

Կենսոլորտի համաերկրային աղտոտվածությունը բարձրացնում է մարդու ժառանգական բեռը, որն արտահայտվում է բանականության նվազումով, նյարդային լարվածության և սթրեսային վիճակներով, ինքնազգացողության նվազումով և այլն:

Գլխուղեղի կեղևի բզամաթիվ գոտիները, որոնք պայմանավորում են մարդու բարձրագույն նյարդային գործունեությունը և հոգեկան երևույթները, Էվոյուցիայի տեսանկյունից երիտասարդ գոյացություն է, և հետևաբար ավելի խոցելի:

Ահա թե ինչու մարդուն սպասվելիք բազմաթիվ աղետներից ամենավտանգավորը կարող է դառնալ մարդու բանականության աստիճանական կորուստը:

Չի կարելի մոռանալ նաև, որ կենսոլորտը որպես բարձր կարգի կազմավորված ինքնակարգավորող համակարգ, չի հանդուրժի այն տեսակի հետագա գոյությունը, որը ծագելով և բավականություն ձեռք բերելով կենսոլորտում, այն դարձնում է մեռած թաղանթ:

* * *

ԱՇՈՏ ԽՈՅԵՑՅԱՆ

*Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահ
աշխարհագրության դոկտոր, պրոֆեսոր*

ԱՆԻ ԽՈՅԵՑՅԱՆ

Թուրք-1 համալսարանի մագիստրոս Թուրք (Ֆրանսիա)

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱՑԻՈՆԱԼ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Մարդկության գոյության և մարդ-բնություն հարաբերությունների հիմքում ընկած է աշխարհագրական թաղանթի բնառեսուրսային պոտենցիալի շահագործումը՝ բնօգտագործումը: Երկրագնդի բնառեսուրսային պոտենցյալը անսահման չէ: Բնօգտագործման ընթացքում տեղի է ունենում մեր քանակական և որակական սպառում: Բնառեսուրսային պոտենցիալի վտանգավոր նվազում և սպառում թույլ չտալու գլխավոր միջոցը ռացիոնալ բնօգտագործումն է, որը ենթադրում է բնական ռեսուրսների բոլոր հիմնական խմբերի՝ տարածքային, հողային, հանքային, ջրային կլիմայական, կենսաբանական ռեսուրսների գիտական գնահատում և դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ առանձնահատուկ մոտեցում:

* * *

ԱՆԴՐԵՅ ԱԳԵԵՎ

*Մոսկվայի Չամաշխարհային Էկոնոմիկայի և ինֆորմատիզացիայի
ինստիտուտի ուսումնական մասի պրոռեկտոր
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

ՎԻԿՏՈՐ ՎՈԼԿՈՎ, ԻԳՈՐ ՍՈՒԿՏ

*Մոսկվայի Չամաշխարհային Էկոնոմիկայի և ինֆորմատիզացիայի
ինստիտուտ*

**ՊՈԼԻԷԼԵԿՏՐՈԼԻՏՆԵՐԻ ՖԱԶԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԽԱՌՆՈՒՐԴԱՅԻՆ
ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԶՐԱՄԱՔՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ**

Օպտիկական և էլեկտրաթիմիական միջոցներով ուսումնասիրվել են կատիոնակտիվ պոլիէլեկտրոլիտը և անիոնակտիվ մակերեսային նյութի փոխազդեցությունը ջրային լուծույթում:

Ներկայացված է, որ առաջացած միացությունը, ինչպես իոնների փոխանակման, այնպես էլ յուրահատուկ փոխազդեցության արդյունք է:

Առաջադրվել է համակարգի կարգավորման մեխանիզմը իրական հոսող ջրերի տեքստիլային արտադրության օրինակի վրա, ցույց է տրվել օգտագործման ուսումնասիրված պոլիէլեկտրոլիտի բարձր էֆեկտիվությունը՝ ներկերի հեռացման համար:

ՄԱՐԴԱՎՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱՄՈՒՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼԱՈՒՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում ներառված են ուսումնական գործընթացի հիմնական խնդիրները, նպատակները, որոնք դրված են ԲՈՒՀ-ի մանկավարժական կոլեկտիվի և ղեկավարության առջև: Անդրադարձել ենք նաև ղեկավարի կարևոր պրոֆեսիոնալ որակներին, առանց որոնց հնարավոր չէր լինի բարձրագույն ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարումը: Քննարկում ենք նաև բուհի հիմնախնդիրները ժամանակակից պայմաններում:

* * *

ԿԱՄՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ,
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ԱՆԲԱՐԵՆՊԱՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՒՑԻԻՆՈՒԹԵՆ ԳՈՐԾՈՆ

Հոդվածում հեղինակը վերլուծում է 25 սուլիցիդենտների հետ իրականացված հետազոտության արդյունքները, հատկապես քննարկվում է անբարենպաստ սոցիալական միջավայրի դերը, որպես կարևոր սուլիցիդոգեն գործոն:

* * *

ՆԱԻՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան Հայակական պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության և ստանդարտացման վարչության պետ,
Հոգեբանության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆ. ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

Հոդվածը նվիրվում է մարզինալության երևույթի սոցիալ-հոգեբանական ասպեկտին: Մեկնաբանվում են մարզինալություն հասկացությունը, դրսևորման ձևերը, նպաստող գործոնները, գիտության մեջ առկա տարածայնությունների հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես նաև մարզինալ անձին բնորոշ հոգեբանական յուրահատկությունները:

ՆԱՏԱԼՅԱ ՄԱԿԱՐՈՎԱ

*Մոսկվայի Համաշխարհային
Էկոնոմիկայի և ինֆորմատիզացիայի Ինստիտուտ*

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածը նվիրված է բարձրագույն ուսումնական հաստատություններում անձնակազմի կառավարման հոգեբանությանը: Դիտարկված են մոտեցումները անձնակազմի կառավարման գործում՝ 40-ական թթ. մինչև մեր ժամանակները (հատկապես ընդգրկված են այժմյան օրերը): Որպես գործիք նշված են մարդու հոգեբանական առանձնահատկությունները, որ կարելի է օգտագործել; կառավարման հոգեբանության մեջ: Առանձնացված են ուսումնական հաստատությունների աշխատակիցների անհատական առանձնահատկությունները և նրանց ազդեցությունը անձնակազմի կառավարման համակարգի էֆեկտիվության վրա

* * *

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՆԶԱԴՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս,
հոգեբանության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Հոդվածը նվիրված է 21-րդ դարի արդիական խնդիրներից մեկին՝ մարդու հոգեբանությանը՝ տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Բացահայտվել են ճգնաժամի բերած փոփոխությունները՝ անձի կողմնորոշման և հոգեբանության մեջ: Դիտարկվել են առաջարկությունները, որոնք կօգնեն մարդկանց հաղթահարել այդ ծանր ժամանակաշրջանը: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա՝ բացահայտվել է տարիքային խումբ, որը ենթակա է, ինչպես հոգեբանական փոփոխությունների, այնպես էլ նյութական կորստի:

ԱՆԱՅԻՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Մխիթար Յերացու անվ. Երևանի Պետական Բժշկական Համալսարանի
Բժշկական հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ*

**ՇԻՉՈՖՐԵՆԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԻ
ԲԱՐՈՅԱԶՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**

Հոդվածում ներկայացրել ենք հասարակության ամենակարևոր և արդիական խնդիրներից մեկը՝ շիզոֆրենիան, նրա էթիոլոգիայի հետ կապված խնդիրները, ժամանակակից թերապևտիկ ուղղությունների արդյունավետության խնդիրները: Հոդվածում կոչ է արվում փոխել շիզոֆրենիայի՝ որպես անհատական և հասարակական ախտի նկատմամբ, արդեն սովորական դարձած, ոչ մի էական արդյունքի չհանգեցող մոտեցումները: Նոր մոտեցումներից մեկը կարող է հանդիսանալ վերադարձը դեպի հոգևոր կյանք, ինչի կորստի արդյունքում այսօր ստեղծվել են մարդկության այնպիսի ճգնաժամեր, ինչպիսիք են՝ շիզոֆրենիան և այլ անհաղթահարելի խանգարումները, ինչպես նաև մարդկության վերացման վտանգը երկրագնդի վրայից:

* * *

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԿԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ**

ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ

*ՀՀԿԳ Նախարարի տեղակալ
Ֆիզ.մաթ գիտությունների թեկնածու, դոցենտ
ՌԴ սոցիալական մանկավարժական գիտության ակադեմիայի իսկական անդամ*

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հոդվածը նվիրված է ժողովրդավարական հասարակարգի կայացման խնդիրներին: Նկարագրված են մարդու և սոցիալական խմբերի գոյատևման ճանապարհները հասարակության մեջ: Դիտարկվում են մարդկային հասարակության զարգացման փուլերը: Բացահայտված են խաղաղ համակեցության պայմանները, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարական հասարակարգի կայացման առանձնահատկությունները: Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ մարդկային խումբ, համակեցության սուբյեկտներ, հակամարտություն, հարկադիր ենթարկելի- ծություն, ազատ մրցակցություն, համագործակցություն, կոնգլոմերատ

* * *

ՀՐԱՆՏ ԱՐԱՅԱՄՅԱՆ

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական
Համալսարանի դասախոս*

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

ԼՂՀ պաշտպանության և զագտագրված տարածքների հարցը կարևոր հիմնախնդիրներից է: Հայկական զորամասերը երբեք էլ նպատակ չեն ունեցել Ադրբեջանից տարածքներ գրավել: Նրանք ազատագրել են այն տարածքները, որոնք խիստ վտանգ էին ներկայացնում ԼՂՀ-ի գոյությանը: Ազատագրված տարածքների պաշտպանումը, բնականոն օգտագործումն ու վերաբնակեցումը ազգային խնդիր է, որին պետք է ձեռնամուխ լինեն բոլորը:

* * *

ԹՈՄԱՍ ԱԼԱՏԱԼՈՒ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Միջազգային Հարաբերություններ ֆակուլտետի դեկան, Եվրոակադեմիա (Էստոնիա)*

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ՝ ԲԱԼԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ

ԵՄ-ն և Հայաստանի Ադրբեջանի և Վրաստանի համագործակցության շուրջ բանակցությունները, որոնք սկիզբ են առել 2010թ. հունիսին, լավ առիթ են հանդիսանում Բալթյան երկրների՝ Էստոնիայի, Լիտվիայի և լատվիայի փորձը վերհիշելու համար: Նշենք, որ այս պետությունները ԵՄ-ի հետ համաձայնագիր կնքել են դեռևս 15 տարի առաջ՝ 1995 թ-ին: Թեև հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, ու 1991 թ. այս երեք պետությունները գտնվել են միևնույն պայմաններում և ակնհայտ է, որ այս երկրների աշխարհագրա-բաղաբական դիրքը ավելի բարենպաստ է:

ԵՄ-ի Հարավկովկասյան պետությունների հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև Բալթյան երկրների պարագայում կիրառված մարտավարությունը դիտարկելիս հարկավոր է նշել նաև տերմինների նշանակությունը՝ օրինակ ավելի նպատակահարմար է Անդրկովկասի փոխարեն օգտագործել Հարավային Կովկաս, քանի որ ԵՄ-ն Անդրկովկասը կապում է Ռուսաստանի հետ: Սկստի ունենալով այն հանգամանքը, որ ԵՄ-ի համար առավել կարևոր նշանակություն ունի տարածաշրջանը: Բալթյան երկրները ամեն ինչ արեցին ճիշտ երկրների (Լեհաստան, Չեխիա, Հունգարիա) խմբում և տարածաշրջանում ընդգրկվելու համար:

Շատ միջազգային կառույցները մեծ նշանակության են տալիս տարածաշրջաններին և տարածաշրջանային համագործակցությանը: Բալթյան երկրների համագործակցությունը: Բալթյան երկրների համագործակցությունը վաղեմի պատմություն ուներ և այդ առումով նրանք խորհրդի կարիք չունեին: Թեև ինչ որ առումով այդ երեք պետությունները եղել են և կլինեն մրցակիցներ, որը հաճախ ավելորդ խնդիրներ է ստեղծում երկրների միջև: Օրինակ, երբ Էստոնիան առաջինը հրավիրվեց ԵՄ-ի հետ բանակցություններ վարելու համար, 3 պետությունների հարաբերություններում որոշակի լարվածություններ նկատվեց: Այնուամենայնիվ, երեք հարևան պետությունների ղեկավարները հաջողությամբ գտել են համագործակցության քաղաքական բանաձևը լավ հասկանալով, որ երեք երկրներից մեկի

հաջողությունը նաև իրենց հաջողությունն է, քանի որ դա տարածաշրջանային հաղթանակ է: Անկասկած, այս բանաձևը պետք է նաև կիրառվի Հարավային Կովկասի պարագայում:

* * *

**ԴՄԻՏՐԻ ՅԱՍՏՐԵՔՈՎ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԵՓՐԵՄՈՎԱ**

Մոսկվայի Համաշխարհային Էկոնոմիկայի և Ինֆորմատիզացիայի Ինստիտուտ

**ՀԱՆՑԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՈՒՈՐՏՈՒՄ. XXI ԴԱՐԻ ՄԱՐՏԱՐԱՎԵՐԸ (ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ)**

Հոդվածում տրված է Հայաստանի Հանրապետության հիմնական չափորոշիչները, որոնցում, համակարգչային հանցագործությունների համար պատասխանատվություն է նախատեսված:

Ելնելով կատարված վերլուծությունից՝ Ռուսաստանի պետական օրենսդիր մարմիններին առաջարկվում է գնահատել հայ գործընկերների փորձը՝ համակարգչային տեղեկատվության պահպանման գործում:

ՏԻԳՐԱՆ ԶՈՉԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Գիտակրթական Միջազգային Կենտրոն,
Իրավաբանական Գիտությունների թեկնածու*

**ԱԶԳԱՅԻՆ / ՊԵՏԱԿԱՆ / ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ԵՐԱՇԻՔ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Պետության գործունեության ամենակարևոր ռազմավարություններից մեկը համարվում է ազգային անվտանգության ապահովումը, երբ բացակայում են իրական արտաքին և ներքին սպառնալիքները ազգային արժեքներին, հետաքրքրություններին և ժողովրդի առօրյա կենսագործունեությանը: Ազգային անվտանգությունը ապահովում է նաև պետության, հասարակության և անհատի կենսական կարևոր հետաքրքրությունների իրականացումը:

* * *

ԼԵՈՆԻԴ ԿԱՐԱՔԵՇԿԻՆ

*Քաղաքագիտության թեկնածու,
Եվրոակադեմիայի պրոֆեսոր (Էստոնիա, Տալին)*

ԲԱԼԱՆՍԱԿՈՐՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում դիտարկվում է հետխորհրդային պետությունների արտաքին քաղաքականության ռազմավարությունը: Նշված են բալանսավորման ռազմավարությունը: Նշված են բալանսավորման ռազմավարության սահմանները, որոնք որոշվում են հիմնական և փոփոխվող գործոնների համակցությամբ: Ներկայացված են Ղազախստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի Բելոռուսիայի պետությունների դիրքերը: Առանձնացված են Ռուսաստանի առաջարկությունները Եվրոպական անվտանգության ճարտարագիտության հարցում:

* * *

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՈՆՅԱՆ

*Վարչավայի Կոլեգիում Սիվիտաս համալսարանի միջազգային հարաբերություններ
ֆակուլտետի. մագիստրատուրայի II կուրսի ուսանողուհի*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻԱՆ. ԻՍԼԱՄԸ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հատկապես սառը պատերազմից հետո նոր ժամանակներում ի հայտ եկավ մի նոր շարժում՝ գլոբալիզացիա: Սա ընդհանուր շարժում էր աշխարհի համար: Սա ստեղծեց մի նոր մտածելակերպ և զարգացման մեծ հեռանկար: Գլոբալիզացիան հնարավորություն էր տալիս ազատ մտածելու, տեղաշարժվելու և հատկապես մեծ հնարավորություն տվեց ազատ առք ու վաճառք անելու բնագավառում (առևտրի), հաղորդակցության և ժամանակակից տեխնիկական միջոցների հնարավորություն: Բայց այս համընդհանուր զարգացման ընդառաջ չգնացին մուսուլմանական երկրները, որոնք այս շարժումը տեսնում էին միայն որպես Եվրոպականացում կամ ամերիկանացում: Նրանք կտրականապես դեմ էին ինչ-որ նորամուծությունների կամ լայն առումով ասված համընդհանուր շփմանն ու զարգացմանը: Նրանք դրա մեջ տեսնում էին միայն իրենց ավանդական սովորույթներից հեռացման գաղափար:

1979թ. Իրանի հեղափոխությունը հիմնված էր այն սկզբունքի վրա, որ Շահն մեղադրվում էր ամերիկանացման համար և իրենց ավանդական սկզբունքներից հրաժարվելու և Ղուրանի օրենքներից շեղվելու համար: Բայց շատ ժամանակ քաղաքական գործիչների կողմից օգտագործվում էր կրոնական հիմքերն իրենց սեփական մտքերն արտահայտելու միջոց: Դրա համար էլ նրանք դեմ են գնում մշակութային գլոբալիզացիային, որը հնարավորություն է տալիս զարգանալու և ժամանակակից լրատվական միջոցների օգնությամբ տեղյակ լինելու իսլամական երկրների ոչ միայն քաղաքական, այլև ներքին խնդիրների մասին: Իսկ այդ խանգարում է մի խումբ մարդկանց, որոնք այդ տեսնում են խոչընդոտ, ոչ թե օգնություն, այլ միջամտություն իրենց ներքին կյանքին և կրոնական սովորույթներին. այս հակամարտությունը մուսուլմանների և քրիստոնյաների մեջ բերում է նրան, որ հիմա առկա է նոր տեսակի

հակամարտության, ինչպես ահաբեկչական գործողություններն են: 9/11-ը փոխեց պատմության ընթացքն ինչպես արևմուտքի և մուսուլմանական աշխարհի միջև: Պետք է ակնկալել, որ հետագայում ի հայտ կգան նոր միջոցներ, որ հնարավորություն կտա խնդիրներն ազատ ճանապարհով լուծելու համար:

* * *

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Շտաբի տեսուչ /ի հաշիվ հատուկ հանձնարարություններով ավագ տեսուչի/, ոստիկանության կապիտան

ՌԵՑԻԴԻՎԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Մեր հազարամյակում առավել գլոբալ խնդիրներից է հանցավորությունը: Նշված խնդիրն էլ ավելի հրատապ է դարձել վերջին տարիներին: Խնդիրն ավելի է բարդանում կապված կրկնակիության և խմբային հանցավորության հետ, ինչի տեսակարար կշիռը հանցավորության մակարդակում շարունակում է կայուն տեմպերով աճել: Ռեցիդիվային հանցավորության նման նեգատիվ աճը ստիպում է այն վերլուծության ենթարկել, պարզել դրան նպաստող պայմանները և պատճառները: Այդ վերլուծությունը հնարավորություն կտա առավել հստակ կազմակերպել իրավապահ գործունեությունը, բացառել կամ նվազագույնի հասցնել նեգատիվ երևույթների ազդեցությունը:

**ԴՄԻՏՐԻ ՅԱՍՏՐԵԲՈՎ
ԻՐԻՆԱ ԼԱԳՈՒՏԻՆԱ**

Մոսկվայի Համաշխարհային Էկոնոմիկայի և Ինֆորմատիզացիայի Ինստիտուտ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ (ԱՊՅ-Ի ՓՈՐՁԸ)

Դիտարկվում են միջազգային իրավական բնույթի իրավական չափորոշող արձանագրությունները, որոնք նշում են հանցագործությունների դեմ իրավական կազմակերպչական պայքարի հիմունքները՝ համակարգչային տեղեկատվության ոլորտում:

Նշված են հիմնական արձանագրությունները, որոնք ընդունված են ԱՊՅ-ի շրջանակներում:

Ելնելով կատարված վերլուծությունից, Ռուսաստանի և Հայաստանի պետական մարմիններին առաջարկվում է ավելի մեծ ուշադրություն դարձնել միջազգային պայքարի փորձին, որը վերաբերվում է համակարգչային տեղեկատվական ոլորտում կատարվող հանցագործություններին:

* * *

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ*Քաղաքագետ**Հյուսիսային Ամերիկա, ԱՄՆ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐՈԽՈՐՀՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ**

2001 թ. հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանը անդամակցեցին Եվրոխորհրդին մեկ պայմանով, որ երկու պետությունները կլուծեն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը համատեղ ուժերով, միասնական պայմաններում: Այս հոդվածում հակամարտության նպատակն է ուսումնասիրել, թե արդյոք Եվրոխորհրդի որոշումը այս երկու երկրների անդամակցության նույն տարում, նույն օրը արդարացրեց և՛ են, հաջողվե՞ց հասնել բուն նպատակներին, թե ձախողվեց: Այստեղ նաև ուսումնասիրվում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի կողմից Եվրոխորհրդի առաջ ստանձնած պարտավորությունների և պարտականությունների տարեկան հաշվետվությունները, համեմատության միջոցով: Այդ պարտավորությունների միջոցով Եվրոխորհուրդը փորձում է Հարավային Կովկասում բարեփոխումներ իրականացնել Եվրոպայի արժեքներին համապատասխան:

* * *

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու:***ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Մեր մոլորակի ժամանակակից պատմության ամենախրթին և ամենատևական հակամարտության՝ մերձավորարևելյան թնջուկի հանգուցալուծմանը միտված մերօրյա փորձերի համակողմանի և մասնագիտական վերլուծությանն ու դրանց արդյունավետության հեռանկարների գնահատմանն է նվիրված այս հոդվածը: Նրանում մանրամասնորեն քննարկվում և լուսաբանվում են ինչպես բանակցող կողմերի, այնպես էլ խաղաղ կարգավորման միջնորդների դիֆերոշումները, շահերը, գործընթացն արգելակող խոչընտոտները և դրանց հնարավոր լուծման տարբերակները: Հատուկ կարևորվում է հիմնախղճի կարգավորման հոգեբանական ասպեկտները, նրա գլոբալ, համամարդկային նշանակությունը:

* * *

ՄԱՐԴԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԲԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական
համալսարանի տնտեսագիտության ամբիոնի վարիչ
Տնտեսագիտության գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

ՓՈՔՐ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անցումային շրջանում գտնվող երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում տնտեսության հիմքը փոքր ձեռնարկատիրությունն է: Հոդվածում բացահայտվում են փոքր բիզնեսի ձևավորման և զարգացման հիմնական ուղղությունները ուսումնասիրվում և վերլուծվում են փոքր ձեռնարկատիրության առաջադիմական ձևերի արմատավորման, ներդրումային գործունեության բարելավման, մրցակցային հավասար պայմանների ստեղծման, դրանց համար տնտեսական նոր կապերի արդյունավետ ուղիների ձևավորման, շրջանառու միջոցներով ապահովման և այլ խնդիրները: Նշված խնդիրների իրականացումը ոչ միայն կխթանի փոքր ձեռնարկատիրության գործարար ակտիվությունը, այլև որակապես նոր տնտեսության ձևավորման համար կստեղծի բավարար հիմքեր: Տվյալ հոդվածի շրջանակներում քննարկվում են հարցերի այն շրջանակները, որոնց միջոցով հնարավոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել փոքր բիզնեսի զարգացման համար:

* * *

ՍԼԱԿԻԿ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս,
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՄԱՐԴԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հոդվածում դիտարկվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական վիճակը 21-րդ դարում: Ցույց են տրված շուկայական հարաբերությունների ձևավորումը ոչ բարենպաստ պայմաններում և հայաստանյան անցումային շրջանի բարեփոխումների առանցքային թերությունները:

Հայաստանի Հանրապետությունը 21-րդ դար մտավ ահավոր ծանր բեռան տակ կբված, որն էլ ոչ նպաստավոր էր դարձնում նրա տեղն ու դիրքը պետությունների համակարգում: Շուկայական հարաբերությունների ձևավորումը հանրապետությունում, մի տնտեսական համակարգից մյուսին անցնելու ժամանակվա իրականացեց, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, ոչ բարենպաստ իրավիճակում, որն էլ խոցելի էր դարձնում կայուն տնտեսական հարաբերությունների առկայությունը: Դրա հետ միասին նախկին տնտեսական հարաբերությունների համակարգից նոր տնտեսական հարաբերությունների մեջ մտած հասարակությունը դեռևս չէր ձևավորվել, անփորձ էր և գտնվում էր սաղմնային վիճակում: Դա պայմանավորված է նրանով, որ նախկին համակարգը փլուզումից հետո դեռևս չէր ձևավորվել հասարակական նոր ինստիտուտներ, որն էլ սահմանափակում էր

հասարակության հնարավորությունները երկրի կառավարման գործին իր մասնակցությունը բերելու համար: Իսկ եթե նշված պատճառներին էլ ավելացնենք հայ Էթնոսի յուրահատուկ առանձնահատկությունը՝ հնից չիրաժարվելու և նորը կասկածանքով ընդունելու նրա առանձնահատուկ բնույթը, ապա պարզ կդառնա այն ընդհանուր պատկերը, որով էլ բեռնավորված՝ Հայաստանի Հանրապետությունը մտավ 21-րդ դար:

* * *

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

*Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի գլխավոր տնօրեն,
Տնտեսագիտության թեկնածու*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ բնական գիտություններ, քաղաքացիական հասարակություն, տնտեսական տեսություններ, անհատական շահ:

* * *

ՄԻԽԱՅԻԼ ՌՈԶԻՆ

*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
Հյուսիսկովկասյան գիտական կենտրոնի բարձրագույն դպրոցի Հարավային Ֆեդերալ
համալսարանի տնօրեն
Դոնի Ռոստով, Ռուսաստան*

ՎԱԼԵՐԻ ՍՎԵՉԿԱՐԵՎ

*Տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Հյուսիսկովկասյան գիտական կենտրոնի բարձրագույն դպրոցի Հարավային Ֆեդերալ
համալսարանի Սոցիալական փոխազդեցությունների գործընթացների համակարգային
մոդելավորման տեխնոլոգիաների լաբորատորիայի վարիչ
Դոնի Ռոստով, Ռուսաստան*

ՉԻՆԱԻԴԱ ԳԱՎՐԻԼՈՎԱ

*Հյուսիսկովկասյան գիտական կենտրոնի բարձրագույն դպրոցի Հարավային Ֆեդերալ
համալսարանի Սոցիալական փոխազդեցությունների գործընթացների համակարգային
մոդելավորման տեխնոլոգիաների լաբորատորիայի ավագ գիտ. աշխատող*

ԺՈՂՈՎՐԴԳՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՄՈՂԵԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Համակարգային մոդելի հիման վրա ներկայացված է ժողովրդագրական կանխատեսումների գործիքակազմը, որն օգտագործում է ծրագրային AnyLogic փաթեթը և հետազոտողի ծրագրային Ինտերնետ-թաղանթը՝ որպես մոդելավորման միջավայր: Գործիքակազմի հնարավորությունները, ըստ հասարակության շարժման հիմնական չափորոշիչների հետազոտության և ապագա ժողովրդագրական իրավիճակների գնահատման, ներառված են Ռոստովի շրջանի ժողովրդագրական գործընթացների վերլուծության շրջանակներում:

ԱՆԱՅԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան Երևանի տնտեսաիրավագիտական
համալսարանի դասախոս, Երևանի գյուղատնտեսական համալսարան
Ֆինանսների ամբիոնի վարիչ*

**21-ՐԴ ԴԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Լավ ձեռնարկատերը նման է նկարչի, որը ողջ ժամանակ ինչ-որ բան է ստեղծում: Ձեռնարկատերը պետք է աննդհատ ստեղծի նոր ապրանքներ և աշխատատեղեր, փնտրի ու գտնի նոր շուկաներ, մշտապես գտնվի շարժման մեջ և պատրաստ լինի պատասխանատվություն կրելու սեփական արարքների համար:

Մարդը երբեք նախապես չգիտի՝ կհասնի հաջողության, թե ոչ: Այդ առումով ևս իսկական գործարարը նման է նկարչի, որ երբեք վստահ չի լինում իր հաջողությանը»:

Աշխարհում տեղի ունեցող գործընթացներից մարդկանց ամենաշատը հետաքրքրում է տնտեսական գլոբալացումը:

ՀՀ գործարարները ևս ինտեգրվեցին միջազգային տնտեսավարման նոր համակարգին: Մոտ 20 տարի է, ինչ Հայաստանն անցում է կատարել տնտեսավարման նոր համակարգին: Շուկայական տնտեսության պայմաններում գործարարները չեն կարող հասնել կայուն հաջողության եթե հստակ և արդյունավետ չպլանավորեն իրենց գործունեությունը:

21-րդ դարի գործարարության մարտահրավերները համակարգում է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը, որը շահույթ չհետապնդող պետական կազմակերպություն է:

Միության 21-րդ դարի մարտահրավերն է՝ Գործարար միջավայրի բարելավում և գործարարների շահերի պաշտպանություն:

* * *

ԱԼԻԱ ԿԵՆԺԵԲԱԵՎԱ

*Կառավարման Ակադեմիայի պետական և տեղական կառավարման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՓՈԽՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԱՓՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Այս հոդվածում հեղինակը ներկայացնում է անտրոպոգենների ազդեցությունը միջավայրի վրա: Այն մատնանշում է Ղազախստանի Հանրապետությունում պետական կարգավորման հիմնախնդիրները, հիմնական նպատակները երկրի անցումային ժամանակահատվածում: Հտակ ապացուցված է պետության բազմանպատակ կարգավորման հզորացման անհրաժեշտությունը ուղղորդվելով Էկոլոգիայի ռիսկերի նվազեցմամբ:

* * *

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

*Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի գլխավոր տնօրեն
Տնտեսագիտության թեկնածու*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *հարավ-կովկասյաներկրներ, տնտեսական համալիր բարեփոխումներ, անցումնային տնտեսությամբ երկրներ, օտարերկրյա ներդրումներ, ժողովրդավարություն:*

* * *

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու

ԷՄՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի

**ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հիփոթեքային վարկը անշարժ գույքի ապահովված երկարաժամկետ վարկն է, որի միջոցով բնակչությունը կարող է բարելավել իր բնակարանային պայմանները: Ներկայումս Հայաստանում հիփոթեքային վարկավորման շուկան գտնվում է իր զարգացման փուլում:

ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման գործընթացում առկա կարևորագույն խնդիրներից են վարկատուների կողմից սահմանվող բարձր տոկոսադրույքները, բնակչության վճարունակության ներկայիս մակարդակը, բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության ցածր մակարդակը, որոնք էլ խոչընդոտում են վարկավորման գործընթացը:

Ուսումնասիրելով հիպոփեքային վարկի շուկայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում փորձ ` արվում հիմնավորել դրա բարելավման ուղիները:

* * *

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԱՆՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր
տնտեսագիտության գիտությունների թեկնածու*

ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ֆինանսներ ֆակուլտետի IV կուրսի ուսանողուհի

ԳԻՏԵԼԻՔԱՅԵՆՔ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից տնտեսագիտությունն ունի շուկայական տնտեսության երեք հայեցակարգ՝ սմիթյան տնտեսագիտություն, շումպետերյան տնտեսագիտություն և բաումոյան տնտեսագիտություն: Գիտելիքների վրա հիմնված տնտեսագիտությունը պահանջում է ողջ ակսիոմատիկայի վերիմաստավորումը, որը բնորոշ է սմիթյան տնտեսագիտությանը: Նոր հասարակության զարգացման պայման է համարվում պարբերական ակտիվությունը, որն ապահովում է գիտությունը, մշակույթը և կրթությունը հզոր բյուջետային աջակցությունը:

* * *

ՎԻԿՏՈՐ ԿԱՐՃԻԿՅԱՆ

*Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս
ՀՀ Նախագահի աշխատակազմ, առաջատար մասնագետ*

ԷՂԳԱՐ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ֆինանսներ ֆակուլտետի
III կուրսի ուսանող

ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՍՆԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը ուղեկցվեց բազմաթիվ տնտեսական սուբյեկտների, սկզբում անվճարունակությամբ, իսկ հետագայում՝ ֆինանսատնտեսական գործունեության անհնարինությամբ: Այստեղ հրամայական անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել սնանկացման պատճառները և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը: Նշված հարցերի պարզաբանման է նվիրված սույն ուսումնասիրությունը:

ՄԱՐԻԱՍ ԷՖԱԴՉԵ

ՄԱԿՍԻՄ ԿՈՒՏՈՒՐՈՎ

ԱՆԴՐԵՅ ՅԱՆԿԵ

*Մոսկվայի Համաշխարհային Էկոնոմիկայի և Ինֆորմատիկազագիտայի Ինստիտուտի ուսանողներ:
Գիտական ղեկավար՝ Ռաբոտինսկի Ի.Վ*

ԳԼՈՒԲԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՆԱԼԻՔ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի և հետխորհրդային տարածքում ձևավորված երկրների տնտեսությունը առավել սպառնալիքի տակ էր, քանի որ ուներ մրցակցություն:

Դրա պատճառներն են՝ տնտեսական ինստիտուտների թերզարգացվածությունը, պետության ակնհայտ անբավարար մասնակցությունը գիտատեխնիկական առաջընթացի խթանման գործում, գիտությանը աջակցող պետական

համակարգի փլուզումը, առաջատար նվաճողների պրակտիկ ներդրման մեխանիզմների բացակայությունը, զարգացած և նոր ինդուստրիալ պետությունների բարձր մրցակցությունը: Այս խնդրի լուծման համար Ռուսաստանի կառավարությունը սկսում է տնտեսության մոդեռնիզացման ծրագիրը: Որքան հաջող ընթանա այդ ծրագիրը, դրանից էլ կախված կլինի Ռուսաստանի տնտեսության կայունությունը գլոբալ տնտեսագիտական հարաբերությունների համակարգում:

* * *

ՎԻԿՏՈՐՅԱ ԱՌՍԱՍՅԱՆ

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի տնտեսագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման ամբիոնի վարիչ

ՀՀ ԵՎ ԼՂՀ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆ. ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ապահովագրություն, *ԼՂՀ* և *ՀՀ* ապահովագրության ոլորտ, *Գրիար – Ինչուրանս*, ապահովագրական շուկա

* * *

ԱՐԳԻՆԵ ԶՈՉԱՐՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոց համալսարան
Տնտեսագիտության, տեղեկատվական համակարգերի և ծրագրավորման ամբիոնի
ուսանողուհի
Ստեփանակերտ*

ՀՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ցանկացած զարգացած երկրի տնտեսության կարևորագույն օղակներից է հանդիսանում արժեթղթերի շուկան: Ինչպես այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում տվյալ ոլորտը գտնվում է աննդհատ վերահսկողության և ուշադրության կենտրոնում: Տվյալ աշխատությունում ներկայացվում է ՀՀ արժեթղթերի շուկայի անցած ուղին, ինչպես նաև համեմատություններ է կատարվել այլ երկրների արժեթղթերի շուկաների հետ:

* * *

ԴԱԿԻԹ ԱՂԱՋԱՆՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոց համալսարանի դոցենտ,
Տնտեսագիտության գիտությունների թեկնածու*

ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *Արտաքին ապրանքաշրջանառություն, Չուտ արտահանում, Առևտրաապրանքաշրջանառություն, Ներքին արտադրողներ, Ներմուծվող ապրանքատեսակներ, Առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածք, Հանքահումքային մթերքներ, Պատրաստի և բուսական ծագում ունեցող ապրանքներ, Ագրարային երկիր, Առևտրաշրջանատությունը ըստ առանձին ապրանքախմբերի, Տնտեսական ինտեգրում*

* * *

ՄԱՐԱՏ ԵԳԱՆՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոց համալսարան
Տնտեսագիտության, ինֆորմացիոն համակարգերի և ծրագրավորման ամբիոնի դասախոս*

ԼՂՀ ԱՐՏԱՐԱՆՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԼՂՀ ներմուծվող և արտահանվող մթերքների հսկայան տարբերությունների հիմնախնդիրը առաջնահերթ է երիտասարդ հանրապետության համար: Վերջինիս որոշումը միայն կարող է նշանակալի լիցք հաղորդել ողջ տնտեսության զարգացմանը:

Աշխատանքում ներկայացված են այն կարևոր հիմնախնդիրները, որոնք հնարավորություն են ընձեռում աշխատել նպատակային, ինչպես նաև ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու որոշ առաջարկություններ:

* * *

ՎԻԿՏՈՐՅԱ ԱՌՍԱՄՅԱՆ

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի տնտեսագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման ամբիոնի վարիչ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, ճգնաժամը տնտեսական կյանքում նոր երևույթ է: Ուղղակի տարբեր ժամանակներում և զարգացման տարբեր մակարդակներում դրանք եղել են տարբեր՝ իրենց ձևերով ու չափերով: Եթե նախկինում դրանք ընդգրկվել են տնտեսության մեկ կամ մի քանի ճյուղ, երկիր և տարածքային միավորում, ապա հետագայում հասարակության ու տնտեսության զարգացմանը զուգընթաց ճգնաժամն ընդլայնել է

ազդեցության ոլորտներն ու աշխարհագրությունը և արդեն XXI դարի սկզբից ճգնաժամային շատ երևույթներ ձեռք են բերել միջազգային բնույթ:

* * *

ՏԱԹՎԻԿ ԱՎԱԳԻՄՅԱՆ

*Ստեփանակերտ, Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Տնտեսագիտության, տեղեկատվական համակարգերի և ծրագրավորման ամբիոնի
ուսանողուհի*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ (ՄԵՆԵԶՄԵՆԹԸ) ՓԶՄ-ՈՒՄ

Չնայած նրան, որ գրեթե բոլոր զարգացած երկրներում ՀՆԱ-ի մեծ մասը արտադրվում է խոշոր ձեռնարկությունների կողմից, փոքր և միջին ձեռնարկությունները նույնպես կարևոր դեր են խաղում երկրի տնտեսությունում: Այդ տեսակետից առանձին կարևորություն է ստանում նման կազմակերպությունների ֆինանսական կառավարման արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը: Տվյալ աշխատությունում արծածվել է այդ ոլորտին վերաբերվող խնդիրները: